2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 310/3 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 26.1քմ արտաքին մակերեսով ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09022026-07-0135) գինը սահմանել 44 000 (քառասունչորս հազար) դրամ և նույն հասցեում գտնվող կառույցի համար առանձնացված 26.1քմ մակերեսով հողամասինը՝ 76 000 (յոթանասունվեց հազար) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի

310 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Պարզիկ Թորոսյանին (այսուհետ գնորդ):
3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով կառույցի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը 900125001140 գանձապետական հաշիվներին:
4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պարզիկ Թորոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1476-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1421-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 24-ի «Սոնա Հայրենիքի Հակոբյանին աճուրդային կարգով հողամաս օտարելու մասին» N 1421-Ա որոշման 1-ին կետի «1 695 000 (մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար)» դրամ թվերը և բառերը փոխարինել 16 950 000 (տասնվեց միլիոն ինը հարյուր հիսուն հազար)» դրամ թվերով և բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1477-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 11-րդ և 12-րդ կետերը և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներին տրամադրել ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. սեպտեմբերի 01-ի
N 1477-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն / կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղակայանքի տեսակը, առավելագույն չափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Քնքուշ Բարսեղյան	Ք. Հրազդան Սպանդարյան փողոց, 1/2	Ք. Հրազդան Սպանդարյան փողոց, 1/2	24 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, 14000
2	Ա/Ձ Քնքուշ Բարսեղյան	Ք. Հրազդան Սպանդարյան փողոց, 1/2	Ք. Հրազդան Սպանդարյան փողոց, 1/2	24 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, 14000
4	Ա/Ձ Պավել Թավաքալյան	Ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 41/2	Ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 41/2	25 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
5	Ա/Ձ Պավել Թավաքալյան	Ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 41/2	Ք. Հրազդան Կենտրոն թ-ս, 41/2	25 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1478-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12 կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 4-րդ ենթակետը և «Ռաֆայելս» ՍՊԸ-ի 2026 թվականի օգոստոսի 28-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում տրամադրել արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ռաֆայելս» ՍՊԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. սեպտեմբերի 01 -ի
N 1478-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպա իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Արտաքին գովազդի մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղական տուրքի տեսակը, սահմանված վճարը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված վճարը (դրամ)
1	«Ռաֆայելս» ՍՊԸ	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 129/1-129/2	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Զ. Անդրանիկի 129/1-129/2	28 քառակուսի մետր գովազդային վահանակ «Ձեր գովազդն այստեղ»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի սեպտեմբեր ամսվա համար՝ 42000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1479-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 195-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Պավել Թավաքալյանի 2026 թվականի օգոստոսի 28-ի հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում տրամադրել շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորման միջոցով առևտուր իրականացնելու նպատակով սարքավորման տեղադրման թույլտվություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պավել Թավաքալյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. սեպտեմբերի 01-ի
N 1479-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՇԵՆՔԵՐԻՑ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպա իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեսակը՝	Տեղական վճարի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Պավել Թավաքալյան	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 41/2	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 41/2	շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորում	ինքնասպասարկվող սուրճի սարքավորման տեղադրում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 5000 դրամ	2026 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար 15000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1480-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 15-րդ կետը և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում գործող հանրային սննդի օբյեկտներին տրամադրել հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. սեպտեմբերի 01 -ի
N 1480-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն / կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղադրման վայրի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Հովսեփ Հայրապետյան	Ք. Հրազդան Զ. Անդրանիկի 96	Ք. Հրազդան Զ. Անդրանիկի 96	37 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 10000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար՝ գործունեությունը սկսում է սեպտեմբերի 01-ից 13 000 դրամ
2	Ա/Ձ Լիպարիտ Մուրադյան	Ք. Հրազդան Միկրոշրջան թ-ս, 14-րդ փողոց, թիվ 16	Ք. Հրազդան Միկրոշրջան թ-ս, 14-րդ փողոց, թիվ 16	14.61 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 5000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար՝ գործունեությունը սկսում է սեպտեմբերի 01-ից 1600 դրամ
3	Ա/Ձ Գոհար Լևոնյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 187/5	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Զ. Անդրանիկի 187/5	24 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 5000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար՝ գործունեությունը սկսում է սեպտեմբերի 01-ից 6400 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1481-Ա

ԱՐՄԵՆ ՍԱՔՈՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Ժողովրդական պատգամավորների Հրազդանի քաղխորհրդի գործկոմի 1994 թվականի հունիսի 30-ի որոշումը, Արմեն Սարգսյանի 2026 թվականի հունիսի 30-ի դիմումը և Հրազդան համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 11-ի № 66 կարգադրության հիման վրա ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 19-ի №8 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Արմեն Սաքոյի Սարգսյանի սեփականության իրավունքը կադաստրային քարտեզագրման արդյունքում 0.06000 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ (կադաստրային ծածկագիր 07-001-0683-0085,0022-ից):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Սաքոյի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 1482-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 489 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդանի քաղխորհրդի գործկոմի 1990 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը, Վարսենիկ Մարգարյանի լիազորված անձ Օլյա Արշակյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը և Հրազդան համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 11-ի № 66 կարգադրության հիման վրա ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 19-ի №8 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել Վարսենիկ Նորայրի Մարգարյանի սեփականության իրավունքը կադաստրային քարտեզագրման արդյունքում 0.06000 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ (կադաստրային ծածկագիր 07-001-0439-0003):
2.ՈՒԺը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 25-ի «Միեր Շուռկայի Արշակյանին հատկացված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման և Հրազդան համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի N 1601 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 489 որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարսենիկ Մարգարյանի լիազորված անձ Օլյա Արշակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

01 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 1483-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Արմեն Մովսիսյանի 2026 թվականի օգոստոսի 24-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Բջնի գյուղի 2-րդ փողոցի թիվ 12 տան բնակիչ Արմեն Յուրայի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2269470, տրված՝ 2007 թվականի հունվարի 19-ին) Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան քաղաքի Կենտրոն Ա-1 թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23-ի փողոց, 2/1 (ծածկագիր՝ 07011RLJQKKK):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Մովսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 1484-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Պարզուհի Մալխասյանի 2026 թվականի օգոստոսի 24-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Երևան քաղաքի Պուշկինի փողոցի 36 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Պարզուհի Սամվելի Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2645574, տրված՝ 2009 թվականի օգոստոսի13-ին) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան Հարավային թաղամասի Րաֆֆու փողոց, 2-րդ նրբանցք, 34 (ծածկագիր՝ 07011HPXVQYT):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պարզուհի Մալխասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 1485-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ֆրունզիկ Վարդանյանի լիազորված անձ Հասմիկ Վարդանյանի 2026 թվականի օգոստոսի 28-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՌԴ քաղաքացի Ֆրունզիկ Վազգենի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1791527, տրված՝ 2003 թվականի հոկտեմբերի 31-ին) Կոտայքի մարզի Քաղսի գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց, 1 (ծածկագիր՝ 07052DVQME9D):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ֆրունզիկ Վարդանյանի լիազորված անձ Հասմիկ Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1486-Ա

ԿԵՆՑԱՂԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԱՍՑԵՆ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Գուրգեն Թորոսյանի 2026 թվականի օգոստոսի 31-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13 շենքի թիվ 18 բնակարանի բնակիչ Գուրգեն Սարիբեկի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09042025-07-0056) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամաս 8-րդ փողոց 21 հասցեում գտնվող կենցաղսպասարկման մասնաշենքի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց, 21 հասցեով (ծածկագիր՝ 07011EYLUVKF):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Թորոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1487-Ա

ԹԱՄԱՐԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 03-ի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մարշալ Բաղրամյան 121/6 հասցեում գտնվող 07-001-0509-0292 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.01932 հա մակերեսով հողամասը 2 000 000 (երկու միլիոն) դրամ արժեքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 121 շենքի 27 բնակարանի բնակիչ Թամարա Գուրգենի Աբրահամյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.01932 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Թամարա Գուրգենի Աբրահամյանին՝ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թամարա Գուրգենի Աբրահամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1488-Ա

ԱՐՏՅՈՄ ՄԱՆԱՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 03-ի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մուշ թաղամաս 90 հասցեում գտնվող 07-001-0501-0063 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.06537 հա մակերեսով հողամասը 5 960 000 (հինգ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) դրամ արժեքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 233 շենքի 2 բնակարանի բնակիչ Արտյոմ Մանասի Դանիելյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.06537 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Արտյոմ Մանասի Դանիելյանին՝ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Մանասի Դանիելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

03 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1489-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 04-Ի N 320 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» N ՀՕ-404-Ն օրենքը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 04-ի «Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և Հրազդան համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 18-ի N 964 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N320 որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հաստատված է
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թվականի սեպտեմբերի 03-ի
N 1489-Ա որոշմամբ

Հավելված 1
Հաստատված է
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թվականի մարտի 04-ի
N 320 որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար (ծածկագիր՝ 1.1-1)

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:

1.2. Ենթակա և հաշվետու է.

Ղեկավարին «Համայնքային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

Ղեկավարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ.

Ղեկավարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների պետերը և աշխատակազմի ստորաբաժանումներում (բաժիններում) չներառված այլ պաշտոններ զբաղեցնող անձինք:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Աշխատակազմի Ղեկավարի բացակայության դեպքում՝ նրան փոխարինում է բաժնի պետերից մեկը կամ բաժին տեսակի կառուցվածքային ստորաբաժանում նախատեսված չլինելու դեպքում՝ աշխատակազմի գլխավոր մասնագետներից մեկը կամ վերջիններիս բացակայության դեպքում առաջատար մասնագետներից մեկը:

Օրենքով նախատեսված դեպքերում Ղեկավարին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

1.5.Աշխատավայրը

ՀՀ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Ղեկավարը.

ա) ապահովում է աշխատակազմում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը,

բ) մասնակցում է աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին,

գ) ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը,

դ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը,

ե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների մասին մրցութային հանձնաժողովի եզրակացությունը, իսկ այդ արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշումը ստանալուց հետո, աշխատանքային երեք օրվա ընթացքում, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է փվյալ պաշտոնում,

զ) հաստատում է աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները,

է) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները,

ը) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը,

թ) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշման հիման վրա օրենքով սահմանված ժամկետում ընդունում է փվյալ համայնքային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում,

ժ) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի ու Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ,

ժա) իր կողմից համայնքային ծառայության դասային աստիճան շնորհած աշխատակազմի համայնքային ծառայողին օրենքով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատելու հետ միաժամանակ իր հրամանով զրկում է նաև փվյալ դասային աստիճանից,

ժբ) օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում,

ժգ) համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր հայեցողությամբ որոշում է աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոնները փոխարինող համայնքային ծառայողների կողմից զբաղեցնելու հարցը,

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ փվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր,

ժե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր,

ժզ) աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն այդ համայնքային ծառայողի պաշտոն զբաղեցնելը մինչև մեկ տարի ժամկետով շարունակելու թույլտվության մասին,

ժէ) կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները,

ժը) համայնքի ղեկավարին է զեկուցում ամենօրյա փոստը և թղթակցությունները,

ժթ) համայնքի ղեկավարի սփորագրությանն է ներկայացնում նրա որոշումները և կարգադրությունները,

ի) աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները,

իա)ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքապետարանների աշխատակազմերի հետ,

իբ) համայնքի ղեկավարին յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին,

իգ) իր անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ,

իդ) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը,

իե) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,

իզ) կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը,

իէ)կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը,

իը) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը,

իթ) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ,

ժ) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ,

իա)ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում,

իբ)անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին,

իգ) մասնակցում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման աշխատանքներին,

իդ)հանդիսանում է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ,

իե)օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների ցուցակների վերաբերյալ, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները՝ տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար,

իզ)օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչին, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին,

իէ)իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն՝ տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություններ տրամադրելու համար,

իը)իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացմանը,

իթ)իրականացնում է գաղտնի փաստաթղթերի մշակման, գաղտնի գործավարության վարման և գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքներ,

խ)աշխատանքի ընդունման ժամանակ անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի կասկած հարուցելու դեպքում իրականացնում է դրանց իսկության ստուգում,

խա) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Ղեկավարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Ղեկավարը ունի բարձրագույն իրավաբանական կրթություն:

3.2.Մասնագիտական գիտելիքներ

Ղեկավարն ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային, Քաղաքացիական, Ընտանեկան, Վարչական իրավախախտումների վերաբերյալ

օրենսգրքերի, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Վարչարարության և վարչական վարույթի մասին», «Զինվորական ծառայության և զինապարտության մասին», «Հավաքների ազատության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի: Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը.

Ղեկավարը ունի համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3.4 Դասային աստիճան

Ղեկավարին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

3.5. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

1. Առաջնորդում
2. Աշխատակազմի կառավարում (կատարողականի կառավարում)
3. Ռազմավարական պլանավորում
4. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
5. Որոշումների կայացում
6. Խնդրի լուծում
7. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Փոփոխությունների կառավարում
4. Տարածքային կառավարում
5. Կոնֆլիկտների կառավարում
6. Հասարակության հետ կապերի ապահովում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
8. Ծառայությունների մատուցում
9. Բողոքների բավարարում
10. Ժամանակի կառավարում
11. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
12. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
13. Փաստաթղթերի նախապատրաստում
14. Ֆինանսների և ռեսուրսների կառավարում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի գործունեության ոլորտների կամ դրանց մի մասի և կառուցվածքային ստորաբաժանումների կամ դրանց մի մասի աշխատանքների համակարգման և վերահսկման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի գործունեության ոլորտների կամ դրանց մի մասի և կառուցվածքային սփորաբաժանումների կամ դրանց մի մասի աշխատանքների կազմակերպման վերաբերյալ՝ պայմանավորված ռազմավարական խնդիրների լուծման կամ քաղաքականությունների իրականացման համակարգման գործընթացներով:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի փվյալ մարմնում մեկից ավելի կառուցվածքային սփորաբաժանումների և որոշակի ոլորտի վրա ազդեցություն կամ փվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ այլ մարմինների լիազորությունների իրականացման վրա ազդեցություն կամ ազդեցությունը սահմանափակվում է փվյալ մարմնի որոշակի կառուցվածքային սփորաբաժանումների կամ վարչական շրջանում քաղաքականության իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների, օփարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է մարմնի գործունեության ոլորտի կամ որոշակի ոլորտի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրները, դրանց փալիս է սփեղծագործական և այլընփրանքային լուծումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1490-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1619 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» N ՀՕ-404-Ն օրենքը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կազմը հաստատելու մասին» N1619 որոշման հավելվածի 2-րդ կետում «աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան